ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2.4-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ

Ս.Հովհաննիսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

Դ.Կարապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ

Ա.Բաբայան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ

Լ.Բասմաջյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Զ.Հայրապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Շ.Հովսեփյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի ապրիլի 8-ին կայացած նիստի N3/2.4-25 արձանագրությամբ՝ «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի կողմից շտկված ֆինանսական նախահաշվի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ իր կողմից ներկայացված ֆինանսական նախահաշվի տողերը խմբավորել ըստ ուղղվածության՝ որևէ փոփոխություն չկատարելով յուրաքանչյուր ուղղվածության համար սահմանված ֆինանսավորման համար, մրցութային հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 1 (մեկ) կազմակերպության՝

- **«ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի** հետ՝ 64.943.200 (վաթսունչորս միլիոն ինը հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր) (այդ թվում՝ 7.515.200 (յոթ միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Ս.Հովհաննիսյան	-	_____
Դ.Կարապետյան	-	_____
Ա.Բաբայան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Զ.Հայրապետյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____